

**ՀԱՅ ԽՈՀԱՆՈՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՄԻՐԱՅԱՆ-ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ԿԱՐՆԵՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳՐԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հովհաննես Ամիրայան-Մամիկոնյան Կարնեցին* ապրել է XIX դարում¹։ Նա ծագումով Կարնո հայ մեծատուն Մամիկոնյան գերդաստանից էր։ Հայրը՝ Հակոբ ամիրա Մամիկոնյանը, 1816 թ. ընտանիքով Կարինից տեղափոխվում է Կ. Պոլիս։ Հոր մահից հետո, 1830-ական թվականներին, նրա չորս որդիները՝ Կարապետը, Հովհաննեսը, Մկրտիչը, Գրիգորը, ընդունում են ուսանալու Վաղարշապատում։ Նրանցից երեքը (այդ թվում Հովհաննեսը) բնակություն են հաստատում Թիֆլիսում։ Գործակցելով Տատյանների, Պեղեյանների և Տյուրկյանների հետ², նրանք աչքի են ընկել իրենց ազգանվեր գործերով։ Հովհաննես Կարնեցին եղել է Անդրկովկասի հասարակական խնամակալության պետական խորհրդական Թիֆլիսում³ և մասնակցել է տեղի մշակութային կյանքին։

Հովհաննես Կարնեցին, ապրելով հայ հասարակական-քաղաքական կյանքի ու կուլտուրայի խոշոր կենտրոններում (Կարին, Կ. Պոլիս, Թիֆլիս), հնարավորություն է ունեցել նաև ուսումնասիրել այդ հատվածների խոհարարական արվեստը, Հայկական խոհանոցին նվիրված իր առաջին աշխատության առաջին մասը նա գրել է 1827 թ. Կ. Պոլսում։ Ձեռագիրը Մատենադարան է բերվել 1964 թ. (10219), Բաքվից։ Սա հայկական խոհարարական գրքի ստեղծման առաջին լուսչիփռն էր մեր իրականության մեջ։ Ձեռագրի հիշատակարանից և այլ աղբյուրներից⁴ երևում է, որ Հովհաննես Կարնեցին այդ ձեռագրից բացի Թիֆլիսում հրատարակության է պատրաստել վեց հատորանոց մի աշխատություն ևս։ Նրա կենդանության օրոք, 1861 թ. Թիֆլիսում հրատարակվել է միայն առաջին (Ա) հատորը՝ «Արհեստ քաղցրաւենիք շինելոյ» խորագրով։ Մյուս հինգ հատորները կորել են 1865 թ. հունիսի 27-ին Թիֆլիսում համբարների՝ քաղաքապետի Գալուստ Շերմազանյանի տան վրա հարձակման ժամանակ⁵, նրա գրադարանում եղած ձեռագրերի հետ միաժամանակ (Հովհ. Կարնեցին եղել է Շերմազանյանի տան կենվորը)։ Նյութական վնասի դիմաց, իբրև հատուցում, տեղի կառավարությունը Կարնեցուն հատկացնում է 7000 ռ., որից 6000-ը՝ նրա կորած 5 հատորների համար⁶, Կորած ձեռագրերի հատորներն ունեն հետևյալ խորագրերը՝ Բ.—«Ջանազան տեսակ օշարակներ և լեկոտներ (շաքարօղի, իքսիր) շինելու վերա», Գ.—«Ջանազան շաքարեղենների և զանազան քաղցրեղեն ուսելլաց վերա ըստ սովորության ալլեկալ տեղաց», Դ.—«Հայաստանի և Տաճկաստանի բազմատեսակ խմորեղինաց վերա», Ե.—«Եվրոպական կերակրեղինաց և խմորեղինաց վերա», Զ.—«Տեստեսական հարկավոր գիտելլաց վերա»⁷։

* Կարնեցին գրվել է նաև «Յոհաննէս Մամիկոնեան Յակոբեան Կարնեցի», ընդ որում «Յակոբեանը» հայրանունն է։ Ամիրայան ազգանունը նա ընդունել է Թիֆլիսում (այսուհետև՝ Հովհաննես Կարնեցի)։

¹ Ծննդյան և մահվան տարեթվերը ստույգ հայտնի չեն։ Որոշ տեղեկությունների համաձայն նրա ծննդյան թիվն է 1806—1808։ Ապրել է խոր ծերություն [տե՛ս Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան)], ձեռ. № 10219 (այսուհետև ձեռագրի համարը՝ տեքստին կից), էջ 23ա։ Տե՛ս նաև նույն ձեռագրի հիշատակարանը]]։

² «Տարազ», 1893, № 11, էջ 169—170։

³ «Մեղու Հայաստանի», 17. II. 1862։

⁴ Հովհ. Կարնեցի, Արհեստ քաղցրաւենիք շինելոյ, Թիֆլիս, 1861, էջ 130, «Երևակ», 1866, № 103, էջ 53, «Մասյաց աղավնի», 1. IX. 1861։

⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 261, Ա. Գ. Հովհաննիսյան, Գ. Ախվերդյանի և Պարսկաստանի համբարությունների մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 194)։

⁶ «Միլն Ավարայրի», 1866, № 10, էջ 520—521։

⁷ Հովհ. Կարնեցի, նշվ. աշխ., էջ 130, «Մասյաց աղավնի», 1. IX. 1861։

Մատենադարանում պահվող ձեռագիր-մատյանը⁸ (Ձ՝ 10219) ունի հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Գիրք որ կոչի Շտեմարան գործառնութեան, արարեալ ազնուատոհմ Կարենցի Մամիկոնեան Յակոբեան Յօհաննէսէս, խնդրանք իշխանապետ Պեղճեան ազնուազարմ Նշան աղայի։ Եւռամբ իմով դրեցի և ընծայեցի ըստ խնդրանացն և ըստ կամացն. 1827, որ ՚ի Միշագիւղա։ Ձեռագիրը լողկացած է .2 մասից, ունի հիշատակարան և պատմաազգագրական ու կենսագրական ընդլայնում արժեքավոր հիշատակագրություններ։ Մնացած ձեռագրերը կորցնելուց 5—6 տարի անց Հովհ. Կարենցին Ռիֆլիսում շարունակել և 1870 թ. ավարտել է շուրջ 50 տարի ընդհատված ձեռագիր մատյանը։ Հովհ. Կարենցին շատ ծանր է ապրել իր ձեռագրերի կորուստը։ Ձեռագրի հիշատակարանում (էջ .18ր) նա գրում է. «...դկնի այն շատ սիրտս ցավելով կոտրվելուն, թեև շատեմ ինձ ստիպեցին նորես աշխատելու, միայն ինձ համար անհնար եղև և գրիչս լիշխեց և ձեռն ու աչքերս չի գործեցին, և թե սկսեի, չէր կարելի այնպես հարուստ գրել, որ բացի մյուս հատորները, մենակ կերակրեց 4—5 հատոր գիրք 2500 տետրակ կերակուրեցեմ ավելի էր, տպակառ չէր։ Կորած աշխատության ձեռագրերը գտնելու հեղինակի երկարամյա փորձերն ապարդյուն են անցել։ Նա հանձնարարել է կնոջը՝ Աննա Կարապետի Շահադիզյանին, եղբայրներին, եղբոր որդիներին ու թոռներին, որ նրանք շարունակեն որոնումները և փող լիսնային ձեռք բերելու կորած ձեռագրերը, իսկ գտնելու դեպքում՝ հրատարակեն իր անունով։

«Շտեմարան գործառնութեան ձեռագիրն ամբողջությամբ ընդգրկում է 185 բաղադրատոմս՝ նվիրված զանազան խմորեղենների, քաղցրավենիքների և ուտեստեղենի այլ տեսակների պատրաստմանը։ Այսպես՝ շաքարեղեններ, անուշենի, կրեմ՝ մրգերով, բրնձադոնդոլ (մաշալեպի), կաթնապուր (սիսլիաշ), ճերմակ ուտ, օշարակ՝ որդան կարմիրով, խմորեղեն՝ շոկոլադով, սուրճով, վանիլով, վարդի և անանուխի յուղով, նարնջի և կիտրոնի կեղևների քերուցքով, մեխակով, դարչինով, հիլով և այլ համեմունքներով, թելխմոր կամ թելանուշ (քատախֆ), կիսալուսին (դուրապիէ), ռեանի (թխվածք), հալվայի զանազան տեսակներ, բեզե, պատառ (օթմա), շաքարահաց՝ դրոժով, մեծաքանակ ձվով պատրաստվող սպունգա տորթ (բանդիսպանիա), շերտավոր գաթա, վենետիկա (վենետիկյան թխվածք), որ կրում է նաև «էկլեր» անունը և այլն։ Նրանց մի մասն այժմ լայն տարածում ունի նաև մեզանում։ Դրանք հայկական խոհանոց են թափանցել մինչև XVIII դարի վերջը։ Ուշագրավ են նաև ծաղկի մուրաբաների պատրաստման տեխնոլոգիայի մասին եղած տվյալները։ Հնում, ինչպես նաև՝ այսօր, ծաղիկները եղել և մնում են իրեն դեղամիջոց մի շարք հիվանդությունների բուժման համար։ Իսկ հայերը օգտակար ծաղիկներից պատրաստել են նաև մուրաբաներ և քաղցրավենիք, որոնք, սակայն, բացառությամբ վարդի, հետագայում մոռացության են մատնվել։ Այդ ավանդույթը մեր ժողովրդի մեջ վերականգնելու նպատակով մենք հրատարակել ենք դրանցից մի քանիսի (մեխակի, զամբախի և ծիրանի ծաղկի) բաղադրատոմսերը։

Հայկական խոհանոցը աչքի է ընկնում իր բազմազանությամբ։ Դա բացատրվում է ոչ միայն պատմական Հայաստանի ազգագրական տարբեր շրջանների խոհարարական արվեստի առանձնահատկություններով, այլ նաև հարեան և այլ ժողովուրդների հետ դարերի ընթացքում փոխադարձ կապերով։ Այս բազմազանությունը, բնականաբար, իր արտահայտությունն է գտել Հովհ. Կարենցու գրառած, ինչպես նաև հորինած բաղադրատոմսերում, թեև հեղինակն իր մեծածավալ աշխատության հիմքում նախ և առաջ դրել է հայ ժողովրդի բազմազարյան խոհարարական մշակույթի հարուստ ավանդույթները։

Ձեռագրի նրա աշխատությունը գրվել է XIX դարում, սակայն անկասկած է, որ այնտեղ բերված զանազան ուտելիքների պատրաստման տեխնոլոգիայի մասին եղած տվյալներն ավելի հին ժառանգում ունեն։ Դրանք պատկերացում են տալիս ոչ միայն այն կերակուրների, քաղցրավենիքների և ըմպելիքների մասին, որ օգտագործել է մեր ժողովուրդը, այլև օժանդակ աղբյուր են Հա-

⁸ «Շտեմարան գործառնութեան (Գիրք խոհարարութեան) 1827—1870 թթ., Կ. Պոլիս (Ա), Թիֆլիս (Բ)։ Գրիչ՝ Յօհաննէս Մամիկոնեան [Մատենադարանի ձեռագրացուցակում՝ Մանուկեան] Յակոբեան Կարենցի (Ա, Բ)։ Ստացող՝ Նշան աղա Պեղճեան (Ա)։ Թերթ՝ 89, Թուղթ՝ 18, 4×13։ Միասույուն։ Շղագիր։ Տող՝ տարբեր։ Կազմ՝ կա։ Հշտկրն գրիչ՝ 1ա (1827 թ.), 18ա (1870 թ.)։ Բվնդ. նաև՝ Վասն Գալուստի Շերմազանեան (տե՛ս «Տուցակ Հեռագրաց Մաշտոցի անկան Մատենադարանի», կազմեցին՝ Օ. Եղանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Հ. Բ. Երեմյան, էջ .1072, ձեռ. № 10219)։

⁹ «Армянская кулинария», Ереван, 1984, с. 182.

յաստանում ու հարևան երկրներում գյուղատնտեսական կուլտուրաների մշակման մասին, որոնցից պատրաստվում է այդ ամենը:

Թեև ժամանակին Կարենցու ձեռագրերը համարվել են վերջնականապես կորած, բայց մեր որոնումների շնորհիվ հայտնաբերված որոշ նյութեր հաստատում են, որ այդ ձեռագրերի մի մասը պահպանվել է հետազայում շրջանառության մեջ է գրվել: Դրանք մաս-մաս հրատարակվել են Քիֆլիսում և հայկական գաղթօջախներում (Աթենք, Մարսել, Բեյրութ, Կահիրե, Բոստոն և այլուր): Վերջին տասնամյակների ընթացքում հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի ընդլայնման շնորհիվ ստացվել են դրանց օրինակները (մի մասն էլ հաշտվել է ձեռք բերել Երուսաղեմից, Փարիզի Նուրարյան մատենադարանից և այլ վայրերից): Մեր ձեռքի տակ գտնվող Հովհ. Կարենցու գործերի («Շտեմարան գործառնութեան»՝ ձեռագիր, «Արհեստ քաղցրահեղ շինելու»՝ տպագիր) և այդ հրատարակություններից մի քանիսի մանրակրկիտ համեմատությունը թույլ է տալիս ասելու, որ դրանց համար, անկասկած, հիմք են ծառայել հեղինակի 35 տարիների ընթացքում գրած թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր աշխատությունները: Բերենք մի քանի օրինակ Հովհ. Կարենցու կորած աշխատության ձեռագրերից՝ մեր կատարած բնագրական համեմատություններից:

1. Կորած ձեռագրերից Վիեննայի Մխիթարյան մատենադարանում պահվող հեղինակի ինքնագիր հատվածն է (ՁԾ 2355): Բն երբ և ինչպես է այն հասել Վիեննա, հայտնի չէ: Մեր ձեռքի տակ է վերջերս Վիեննայից ստացված այդ ձեռագրի լուսապատճենը¹⁰: Ձեռագիր հատվածը հայերեն և հայատառ թուրքերեն է (4-ը՝ հայերեն), պարունակում է 20 բաղադրատոմոս, համընկնում է «Շտեմարան գործառնութեան» ձեռագրի առաջին մասին: Երկու ձեռագրերի համեմատությունը¹¹ պարզեց գրչության (շղագիր), գրության (միասյուն), թղթի չափերի (19×12), տողի (տարբեր), թանաքի (զույն), բաղադրատոմոսների՝ հաշորդականության, բովանդակության, չափի ու կշռի և այլնի նույնությունը: Բերենք մի քանի օրինակ.

ա) Երկու ձեռագրերում նույն հաշորդականությամբ են՝ «աճի պատեմ թերթիպի» և «բա-հաթ լոխում», «բանդեսպանի» և «բեմանի», «ֆոնեք քուտապիեսի» և «օսմանը քուտապիեսի» և այլ բաղադրատոմոսները:

բ) Բաղադրատոմոսների բովանդակության և չափի ու կշռի նույնություն.

«Օմմաեղը քուտապիեսի»

«Եղը... աղեկ ճերմականալեն ետքը լեցուր վը-«Եմաղը խառնելով կըճերմակացենս, ետքը շեքե-րանն քիշ-քիշ շեքերեն... ետքն ալ ալուրն ալ կե-րը կըխառնենս, ետքը ալուրը, աղեկվը շաղվելեն նենս... և աղեկվը շաղվելետ ետքը... և թեքսիլինփեթը թեփսիլին մեշը թուղթը կըտենս կըշա-վրա հաստ թուղթ շարեն...»

րես...

(«Շտեմարան գործառնութեան», ձեռ. էջ 7բ):

(Ձեռագիր հատված¹², էջ 2բ):

«Ձոնեմ քուտապիեսի»

«Եղը ինչպես... օսմանը քուտապիեսին... անանկ «Եմաղը խառնելով կըճերմակացենս, ետքը շեքերը կենս... և վրան ալ ալուրը... աղեկվը խառնելետ կըխառնենս, ետքը ալուրը, ետքը հակիթները կը ետքը հակիթը... կըկոտենս...»

կոտրես...

(«Շտեմարան գործառնութեան», ձեռ. էջ 8բ):

(Ձեռագիր հատված, էջ 2բ):

«Բաճաթ լոխում»

«...տրմ. մեռմեռ նիշաստա»

«...տրմ. մերմեր նիշաստա»

(«Շտեմարան գործառնութեան», ձեռ. էջ 4ա):

(Ձեռագիր հատված, էջ 1բ):

Պակաս կարևոր չեն նաև հայատառ թուրքերեն շարադրանքի որոշ նմուշներ «Շտեմարան գործառնութեան» ձեռագրում (ՁԾ 10219, էջ 56ա):

Այս ամենից հետևում է, որ Վիեննայի Մխիթարյան մատենադարանում գտնվող ձեռագիր հատվածը Հովհ. Կարենցու բնագիրն է: Պարզվել է և ճշգրտվել են նորահայտ բնագրի հեղինակի, գրչության ժամանակի և տեղի հարցերը, որ տակավին անհայտ էին մնացել ձեռագիր հատվածում հիշատակագրությունների բացակայության պատճառով: Ձեռագրի նկարագրության մեջ

¹⁰ Տե՛ս Մատենադարանի գրսի լուսատիպ, 325:

¹¹ «Ծուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», ձեռ. ՁԾ 10219 և «Ծուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանի», կազմեց Հ. Օգոստինոս վրդ. Սեբուլյան, հ. Գ, Վիեննա, 1983, էջ 948—949, ձեռ. ՁԾ 2385:

¹² Ձեռագիր հատվածում բաղադրատոմոսները ներկայացված են շատ համառոտ, հեղինակը երբեմն էլ բավարարվել է միայն չափերը տալով:

ասված է: «Խոհանոցի գիրք թուրքերեն (փխ՝ հայերեն և հայատառ թուրքերեն, Գ. Գ.): Գրել՝ անձանք: Ժամանակ՝ ԺԹ գարի վերջերք: Տեղի՝ հավանաբար Կ. Պոլիս»¹³ և այլն: Սակայն քննությունը պարզում է, որ գրիչը և հեղինակը նույնն են՝ «Յօնաննէս Մամիկոնեան Կառնեցի», գրչագրվել է իրոք Կ. Պոլսում՝ XIX գարի սկզբներին:

2. Հովհ. Կարնեցու ձեռագրերի կորստից թառորդ գար անց՝ 1889 թ., Թիֆլիսում Հակոբ Մելիք-Քախտամյանցը հրատարակել է «Տանտիկին և խոհանոց» գիրքը: Միջանկյալ այդ ժամանակահատվածում խոհանոցին վերաբերող այլ գործ մեզ հայտնի չէ, բացի 1874 թ. Բաքվում լույս տեսած Ալ. Քալանթարյանի «Տեսես կամ տեսեսական մի քանի գիտելիքների մասին» և հայ խոհանոցային գրքերի մեջ եղած անդրանիկ հրատարակությունը համարվող Հովհ. Կարնեցու: «Արհեստ փաղցրանելի շինելոյ»¹⁴ գրքերից: Վերջինս բարձր է գնահատվել ժամանակակիցների կողմից¹⁵:

Հակոբ Մելիք-Քախտամյանցի հրատարակած «Տանտիկին և խոհանոց» գրքի և Հովհ. Կարնեցու ձեռագրի և տպագիր գործերի համեմատությունը ցույց է տալիս, որ «Տանտիկին և խոհանոց» գիրքը կազմելիս հեղինակի ձեռքի տակ եղել են Հովհ. Կարնեցու կորած ձեռագրերից և «Արհեստ փաղցրանելի շինելոյ» գիրքը: Ա, Բ մասերից և 23 գլուխներից բաղկացած, 308 էջանոց «Տանտիկին և խոհանոց» գիրքը ընդգրկում է ուսման համար գրեթե բոլոր տեսակների ու տեսնական այլևայլ գիտելիքների վերաբերյալ շուրջ 600 բաղադրատոմս, ինչպես նաև՝ 300 բաղադրատոմս բառարան: Այս գիրքը արևելահայերի համար համարվել է առաջին փորձը¹⁶: Հ. Մելիք-Քախտամյանցը, սակայն, իր հրատարակության մեջ առատորեն օգտվել է արդեն տրույադրված, խոհանոցային գրքերի մեջ եղած, մեզ հայտնի անդրանիկ հրատարակությունից՝ Հովհ. Կարնեցու «Արհեստ փաղցրանելի շինելոյ» գրքից, որի միայն մուրաբաներին նվիրված ձեռագրերի վերջին՝ 2 հատորը նույնպես նվիրված է տեսնական գիտելիքներին): Այդ բաղադրատոմսերից մի քանիսը¹⁸ բացակայում են Հովհ. Կարնեցու տպագիր գրքում, սակայն նյութի, ոճի, շարադրանքի, պատրաստման մեթոդների և նման մի շարք այլ փաստերի բացարձակ նույնությունը, թույլ է տալիս ասելու, որ Մելիք-Քախտամյանցի ձեռքի տակ գտնվող Հովհ. Կարնեցու կորած ձեռագրերի մեջ կարող էր լինել նաև հեղինակի տպագիր գրքի ձեռագիր օրինակը:

Այդի ընկնող ընդհանրություններից է հեղինակի ձեռագիր և տպագիր գործերում ու «Տանտիկին և խոհանոց» գրքում հայերենի, թուրքերենի, ռուսերենի և մասամբ վրացերենի զուգադիր գործածությունը: Գրքի բառարանից ցայտուն երևում է հրատարակչի հակվածությունը դեպի արևմտահայերենը (թեև նախատեսված է արևելահայերի համար): Շարադրանքի և թուրքերեն բառերի գործածության հաճախականությունը ենթադրել է տալիս, որ գործը պետք է ստեղծված լինեի առավելապես արևմտահայ միջավայրում: Մեզ դեռևս չի հաջողվել պարզել Հակոբ Մելիք-Քախտամյանցի ինքնությունը, թեև ազգանունը և գրքի առաջաբանում բերված ռուսահայերի համար արտահայտությունը վկայում է նրա արևելահայ լինելու: Գրականության մեջ Մելիք-Քախտամյանցի անվանը հանդիպել ենք միայն որպես «Տանտիկին և խոհանոց» գիրքը կազմողի¹⁹: Ասենք նաև, որ «Տանտիկին և խոհանոց» գիրքը տարբեր ժամանակներում նույնու-

¹³ Տուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանի ի Վիեննա, Հ. Գ, ձեռ. № 2385, էջ 948:

¹⁴ Գրքում տեղ են գտել մոտ 40 տեսակ մրգերով, դրանցից մի քանիսի կեղևներով, դափնու, թուրինջի և այլ տերևներով, վանիլով, մեխակով, դարչինով, հիլով, սուրճով, շոկոլադով, անանուխի յուղով, որդան կարմիրով, մի շարք բույսերի արմատներով պատրաստված մուրաբաների, դոնդողակների (ժելե), պոմադկանների (կոնֆետի տեսակ), քաղցր ոգելից խմիչքների և մեղրով պատրաստվող այլ քաղցրավենիքների բաղադրատոմսեր:

¹⁵ Գիրքը գրախոսել է Գ. Այվազովսկին, նշելով գրքի արժանիքները. «Փափաքելի է, որ այս Ա հատորը սիրով ընդունվի մեր ազգին, որովհետև պատմական պարոնը անով պիտի հորդորվի հրատարակելու 5 տետրակի ևս... Ա հատորը կծախվի նաև խալիպյան ուսումնարանի գրասենյակը և գինն է 85 թուրք. արծ. (ՕՄասյաց աղավնի, 1. IX. 1861):

¹⁶ Տե՛ս Մելիք-Քախտամյանց, Տանտիկին և խոհանոց, Թիֆլիս, 1889, առաջաբան:

¹⁷ Հ. Մելիք-Քախտամյանց, նշվ. աշխ., էջ 209—227, բաղադրատոմս՝ № 401—427:

¹⁸ Նույն տեղում, № 425, 402, 403 բաղադրատոմսերը:

¹⁹ «Աղբյուր», 1889, № 4, էջ 184:

թյամբ օգտագործվել է խոհարարական գրքեր կազմելու²⁰։ «Տանտիկին և խոհանոցը» հրատարակվելուց երեք տարի անց՝ 1892 թ., այն ընդօրինակել է նորրայադետցի Օհան Պետրոսյանը, որի գրչագիր մատյանը ես գտնվում է Մատենադարանում²¹ (ձեռագիրը Մատենադարան է բերվել 1962 թ. Թիֆլիսից)։

Հաջորդ օրինակները, որոնք շին բերվում այստեղ տեղի ուղության պատճառով, վերաբերում են սփյուռքի հրատարակություններում Կարենցու կորած աշխատության հրապարակ գալուն, որ ի հայտ են եկել մեր որոնումների ընթացքում։ Թեև մեր ներկայացրածը Կարենցու գրական ժառանգության մի փոքր մասն է (միայն 4-րդ հատորը ընդգրկում է ավելի քան 2500 բազադրատոմս), բայց հայտ ունենք երբեք մեր ձեռքի տակ եղած նրա գրչի վաստակը ամբողջացնել տպագրությամբ։

РАБОТЫ ОВАНЕСА АМИРАЯНА-МАМИКОНЯНА КАРНЕЦИ, ПОСВЯЩЕННЫЕ АРМЯНСКОЙ КУЛИНАРИИ

ГРЕТА ГРИГОРЯН

Р е з ю м е

Ованес Карнеци Амираян-Мамиконян является создателем первого руководства по кулинарии (Матенадаран им. Мажтоца, рук. № 10219, 1827 г., Константинополь). Ему принадлежат первые издания армянских книг по кулинарии (1861, Тифлис) и шеститомное рукописное исследование, часть которого была утеряна в 1865 г.

Обнаруженные в результате исследований отрывки его произведений свидетельствуют о том, что утраченные рукописные материалы Ованеса Карнеци не были уничтожены. Имеющиеся опубликованные и рукописные данные позволяют выяснить ряд важных вопросов, связанных с найденным оригиналом текста Ованеса Карнеци, хранящегося в библиотеке армянской конгрегации в Вене, а также узнать о судьбе части утерянных рукописей.

²⁰ «Խոհարարուհի», Թիֆլիս, 1897, Վ. Ռոտիշանց, Գործնական խոհարարական դասագիրք, Թիֆլիս, 1901, «Ինչպես պատրաստել համով և տեղադրար ճաշ», Երևան, 1936, «Հայկական խոհանոց», Երևան, 1963 («Армянская кулинария», Ереван, 1984, с. 175—190)։

²¹ Մատենադարան, Հայերեն նոր ձեռագրերի հավաքածու, № 8։